ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՀԵՏ
(XVIII դ. վերջ)

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

XVIII դ. վերջին քառորդի հայ ազգային-ազատագրական շարժման մեջ ակտիվ գործունեություն ծավալեց ռուսահայ թեմի հոգևոր առաջնորդ, եկեղեցական և քաղաքական գործիչ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Նրա ազգանվեր գործունեությունն արտահայտվեց տարբեր մարդկանց ուղղած նամակների, զեկույցների, ծրագիր-առաջարկների, գրավոր հիշատակագրերի ու դաշնագրերի նախագծերի տեսքով, «…թղթակցութիւններ ըրաւ Ռուսաց տէրութեան պաշտօնատարներուն հետ, որոնցմէ կախում ունէր հայոց անդորրութիւնը և բարօրութիւնը»[1]:

Արղությանը նամակագրական մշտական կապեր էր պահպանում Վրաստանի հայ գործիչների (Դ. Բեհբության, Ս. Թումանյան, Ս. Արղության, Հ. Ղորղանյան), Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի, հնդկաբնակ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանի, Արցախի մելիքների, ռուս ռազմական-քաղաքական գործիչների և այլոց հետ: Թղթակցում էր աշխարհի տարբեր վայրերում՝ Հնդկաստանում, Պարսկաստանում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Երուսաղեմում և այլուր բնակվող հայերին:

Առավել հետաքրքրություն են ներկայացնում Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն (1780–1799 թթ.) ուղղած նամակները: Նամակագրության թեման տարաբնույթ էր՝ երկրի քաղաքական վիճակի վերաբերյալ դատողություններից մինչև մշակութային կյանքի քննարկումներ: Այդ և այլ հարցերի շուրջ հետաքրքիր են Հայոց կաթողիկոսի և ռուսահայ թեմի առաջնորդի՝ երբեմն խիստ հակադիր տեսակետները:

Քննարկված թեմաների մեջ առաջնային կարևորություն էր ներկայացնում Հայաստանն օտար լծից ազատագրելու հարցը, ինչը XVIII դ. հայ հասարակաքաղաքական գործիչներին ամենաշատը հուզող խնդիրներից էր: Հայտնի է, որ դարավերջին ակտիվացել էին Ռուսաստանի հետաքրքրությունները Անդրկովկասի նկատմամբ, և նախատեսվում էր ռազմարշավ դեպի հարավ: Հայաստանը ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու հարցում Ղուկաս Կարնեցին մեծ հույսեր էր

---

[1] *Տե՛ս Յիշատակարան, կազմ.՝ Վ. Զարդարեան, հ. Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 52:*

կապում արքեպիսկոպոսի հետ՝ հանձին նրա տեսնելով միջնորդի ռուսական արքունիքի և Հայաստանի միջև: Ռուսական արքունիքի ներկայացուցիչներին ուղղած իր նամակներում նա դրվատում էր արքեպիսկոպոսին: Այսպես, 1782 թ. հունվարի 30-ին կաթողիկոսը Հարավային Ռուսաստանի կառավարիչ, իշխան Գրիգորի Պոտյոմկինին գրում է. «Եւ թե վասն հարկաւորութեանց ինչ մերոց զբանս աղերսանաց մատուցեն մեծութեան ձերում որդին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն..., աղաչեմ լսել քաղցրութեամբ և կատարել»[2]: Իսկ 1784 թ. օգոստոսի 1-ին Հյուսիսային Կովկասի բանակի գլխավոր հրամանատար, Գ. Պոտյոմկինի ազգական, գեներալ Պավել Պոտյոմկինին ուղղած նամակում Արղությանին ներկայացնում է որպես իր կողմից վստահելի անձի, որին թույլատրել էր ռուսների հետ բանակցություններ վարել[3]:

Ժամանակի ընթացքում, սակայն, զգացվում է որոշակի սառնություն երկու հոգևոր գործիչների փոխհարաբերություններում: Նրանք, լինելով Հայաստանը ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու հետևորդ, հանդես էին գալիս տարբեր դիրքորոշումներով: Արղությանը 1784 թ. մարտի 16-ին և մարտի 20-ին Պ. Պոտյոմկինին գրած նամակներում կարծիք էր հայտնում, որ ռուսական զորքն Անդրկովկաս գալու դեպքում անհրաժեշտ կլինի բնակչության մեջ նախապատրաստական աշխատանքներ տանել, ժողովրդին զինել և միանալ ռուսներին: Միևնույն ժամանակ պատրաստակամություն էր հայտնում տեսակցել Ղուկաս Կարնեցու հետ՝ խորհրդակցելու ազգային-ազատագրական խնդրի վերաբերյալ: Արքեպիսկոպոսն իր նամակներում կաթողիկոսին բազմիցս համոզում է քաղաքական ակտիվ գործունեության դիմել, ռուս ռազմական-քաղաքական գործիչներից օգնություն խնդրել և հայ-ռուսական դաշինք կնքելու նախագիծ առաջարկել ռուսական կառավարությանը:

Դեռևս 1783 թ. փետրվարին Արղությանը նամակ էր գրել Կարնեցուն՝ պնդելով, որ կաթողիկոսը հանդիպի Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի հետ՝ բանակցելու, որ ռուսական զորքը հասնի Արցախ: Սեպտեմբերի 5-ի պատասխան-նամակում կաթողիկոսը խուսափողական պատասխան տվեց՝ նշելով, որ տեսակցությունն իր և Հովհաննեսի միջև անհնար է, քանի որ իրենք գտնվում են տարբեր վայրերում, իսկ մարդ ուղարկելը կարող է կասկածներ առաջացնել[4]: Չնայած դրան՝ Արղությանը նամակներով շարունակ խրախուսում էր Գանձասարի կաթողիկոսին, համոզում, որ ռուսական զորքն Արցախ հասնելու դեպքում անհրաժեշտ

---

[2] Армяно-русские отношения в XVIII веке (այսուհետև՝ Армяно-русские отношения), сб. документов под ред. акад. М. Нерсисяна, т. IV. Ереван, 1990, док. 117, с. 196.

[3] А. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетния. Ереван, 1990, с. 56; Армяно-русские отношения, док. 179, с. 281–282.

[4] А. Иоаннисян. *Նշվ. աշխ., էջ 92:*

է միանալ նրանց և ապստամբել պարսից խանի դեմ: Նույն թվականի հուլիսին գրած նամակներում դարձյալ պնդում է, որ Ղուկաս Կարնեցին նամակ գրի Գ. Պոտյոմկինին և հատուկ դիմում՝ Եկատերինա կայսրուհուն՝ հայերին ռազմական օգնություն ցուցաբերելու խնդրանքով: Կաթողիկոսը կրկին մերժեց՝ նշելով, որ եթե անգամ ինչ-որ բան արվի ազգի համար, ապա կարվի և առանց դրա, ավելացնելով, որ վերջերս նամակ է ուղարկել Գ. Պոտյոմկինին՝ շնորհակալություն հայտնելով հայերի նկատմամբ բարի մտադրությունների համար[5]: Կաթողիկոսը 1783 թ. ապրիլի 10-ին և հունիսի 28-ին նույնանման շնորհակալական բովանդակությամբ նամակներ է հղում նաև Պ. Պոտյոմկինին[6], ինչը Արղությանին չի գոհացնում: Վերջինս առաջարկում է կրկին դիմել ռուս հրամանատարներին և հստակորեն օգնության խնդրանք ներկայացնել: Օգոստոսին կաթողիկոսին գրած նամակում Արղությանը կրկին արծարծեց Ռուսաստանի հետ դաշինք կնքելու հարցը: 1783 թ. սեպտեմբերի 5-ին Կարնեցին Արղությանին գրում է. «Եւ ի յօգոստոսի Զ (6) գրեալ թղթոջդ, որ խնդրես զթուղթ գրել առ քնէազ գերապայծառ իշխանն և առ զօրապետն (Գ. և Պ. Պոտյոմկիններին– Հ. Ա.), բարւոք դիտումն է, սակայն այժմ չունիմք զձեռնհասութիւն գրելոյ: Յետ սուղ միջոցի գրեսցուք»[7]: Նաև հաղորդում է, որ դաշնագրի մասին ռուսական կողմը ոչինչ չի ակնարկում՝ մենք ինչպե՞ս առանց նրանց համաձայնության և մեր ազգին տեղյակ պահելու դաշնագիր ներկայացնենք. «…ի կողմանե դաշանց, զորս դու խնդրես՝ նոքա զբան ինչ ոչ գրեն առ մեզ: Ապա թարց նոցին խնդրելոյ, և առանց գիտութեան ազգին մերոյ որպէ՞ս կարեմք զդաշնագիրս գրել առ նոսա»[8]:

Արղությանը մեծ ցանկություն ուներ այցելել Ս. Աթոռ, սակայն տարիներ շարունակ չէր կարողանում, «…զի ոչ հրամայեն ելանել աւագագայքն»[9]: 1785 թ. հոկտեմբերի 9-ին նա կաթողիկոսին գրում է. «…մեզ պատասխան գրեցիք, թէ մեր ելն աստի չէ կախեալ ի մերոյ կամաց, այլ վեհագոյնիցն, յորոց և քանիցս խնդիր եմք արեալ հրամայել մեզ գալ իտեսումի սրբուի ձերոյ մինչև ցայժմ այնմ պատասխան ոչ ընկալայ…»[10]:

---

[5] *Նամակի բովանդակությունն Արղությանի և նրա համախոհների կողմից փոխվում է, մասնավորապես, նշվում էր, որ հայ ժողովուրդը սպասում է հաղթական բանակին՝ հուսալով վերջինիս օգնությամբ ազատագրվել օտար տիրապետությունից (տե՛ս* А. Иоаннисян. *Նշվ. աշխ., էջ 67–68):*

[6] Армяно-русские отношения, док. 117, с. 194–196, док. 147, с. 239–240, док. 153, с. 244–245.

[7] *Նույն տեղում, փաստ. 164, էջ 261:*

[8] *Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 2803, թ. 254:*

[9] *ՄՄ, ձեռ. 2699, թ. 111, 120:*

[10] *Նույն տեղում, թ. 50:*

Ամենայն Հայոց կաթողիկոսի նմանօրինակ ձեռնպահ պահվածքն ուներ իր բացատրությունը. լինելով հեռատես ու խորաթափանց գործիչ՝ նա չէր կարող բացահայտ բանակցել ռուսների հետ, քանի որ վստահ չէր, որ ռուսական զենքը կարող էր երկիրն ազատագրել մահմեդական տիրակալներից և հետագայում վերջիններս հաշվեհարդար չեն տեսնի հայ բնակչության հետ: Կարնեցու զգուշությունն արտահայտվում էր Արղությանին գրած գրեթե բոլոր պատասխան-նամակներում: Ստանալով խուսափողական պատասխաններ, ինչպես նաև Պ. Պոտյոմկինին ուղղած Կարնեցու նամակը՝ Արղությանը վրդովվում է վերջինիս անվճռականությունից: «Արքեպիսկոպոսը հեգնում է Էջմիածնի միաբաններին, որոնք լոկ ազատվելու մասին են մտածում՝ հաշվի չառնելով ոչ այդ ազատագրման եղանակները (հայերի գործուն մասնակցությամբ), ոչ էլ ապագա Հայաստանում ստեղծվելիք կարգերը»[11]: Բնականաբար, նրա հեգնանքն ուղղված էր առաջին հերթին կաթողիկոսին: Նամակներում թեմական առաջնորդը բացահայտորեն նախատում է Ղուկասին, միտք հայտնելով, որ նրա վախը կարող է վարակիչ լինել. «լսելով… զէրկուղ զորս կրէք ի յանօրինացն և մէք աստէան տագնապիմք»[12]:

Հավանաբար, նմանօրինակ համարձակ դատապարտումները նպաստել են, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը փոխի նախկին վերաբերմունքը Արղությանի նկատմամբ: 1785 թ. սկզբից մինչև 1786 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում կաթողիկոսին գրած նամակները մնում են անպատասխան[13]. Դրանք բոլորն սկսվում են վիրավորված տոնով. «…Բայց ես զգալստեանէ իմմէ մինչև ցայժմ քանիցս անգամ գրեալ եմ սրբոյն ձերոյ, յուսամ զի ընկալեալ իցես և գիտացեալ զբոլոր կամս իմ…»[14]: Հնարավոր է, որ կաթողիկոսը մեղադրական նամակ է հղել Արղությանին, քանի որ վերջինս 1785 թ. նամակներից մեկում կարծես մեղանչում է, գրելով՝ այսօր եկեղեցու գլուխը դու ես, և որպես սուրբ հայր ես միայն քեզ եմ ճանաչում. «...եւ բոլորովին ենթարկեալ կամ ի կամս ձեր...»[15]:

Այնուամենայնիվ, արքեպիսկոպոսը չի դադարեցնում նամակագրությունը կաթողիկոսի հետ, նրան մշտապես տեղեկություններ է հաղորդում իր թեմում եղած դժվարությունների, դրամի պակասի, Նոր Նախիջևանում շինարարական աշխատանքների, եկեղեցաշինության, հատկապես, Սուրբ Խաչ վանքի շինության, Աստրախանում բացված հայկական տպարանի աշխատանքների և այլնի մասին[16]:

---

[11] *Ա. Մնացականյան. 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ.– «Բանբեր Մատենադարանի», 1958, - 4, էջ 151–152:*

[12] *ՄՄ, ձեռ. 2699, թ. 66:*

[13] *Նույն տեղում, թ. 23, 49, 57, 152:*

[14] *Նույն տեղում, թ. 152:*

[15] *Նույն տեղում, թ. 24:*

[16] *Նույն տեղում, թ. 49, 57, 95, 110:*

Հոգևոր գործիչների միջև հարաբերություններն ավելի են սրվում 1788 թ. սկսած: 1788 թ. հունվարի 17-ին Արղությանը Մոզդոկից Կարնեցուն գրած նամակում բացահայտ կշտամբում է, որ վերջինս անպատասխան է թողել իր գրությունները և անգամ չի տեղեկացրել, որ արքեպիսկոպոսի ուղարկած դրամը (հավանաբար եկեղեցական տուրքը) հասել է Էջմիածին. «…այլ հարկ էր եթէ վասն զանազան գրեցելոցս ո՞չ գոնեա վասն առաքեցեալ դրամին ըստ Եսայուն յառաջի երկու հարիւր թումանին և յետ ի հարիւր իսուն և մէկ թուման հինգ հարիւր թումանին, մանաւանդ վասն պատուական արժումին գրել մեզ եթէ ոչ շնորհակալումի այլ գոնեա լոկ ժամանումն գիտացէ սրբուի ձեր որ արժիւդ այդ ինքնին չէ կերտեցեալ այլ մերով աշխատութեամբ դիւրին ի վայելելեաւ աս նոյն նուագ առ մէզ և աս մատուցանօղն պիտոյ էր գրել գհաճումի ձեր, իսկ եթէ աշխատանքն իմ այս և այլն ամենայն անհաճոյք են սրբուի ձերոյ, այն եղիցի ապաստան հայրումի ձերում»[17]:

Արքեպիսկոպոսի և կաթողիկոսի հակասություններն արտահայտվում էին նաև հոգևոր-մշակութային կյանքի ոլորտում: Մեծապես նպաստելով Նոր Նախիջևան քաղաքի հիմնադրմանը՝ Արղությանն ամեն քայլի դիմում էր՝ բարելավելու նորաբնակների սոցիալ-տնտեսական վիճակը և նրանց մոտ պահելու հայ առաքելական եկեղեցու արմատներին: Այդ նպատակով կաթողիկոսից քանիցս օրհնության կոնդակ է խնդրում նորաբնակ նախիջևանցիների և թեմի մյուս հայաշատ բնակավայրերի համար, ինչպես նաև՝ Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայ բնակչությանը շնորհավորել ձեռք բերած արտոնությունների համար (նկատի ունի Եկատերինա II-ի կողմից նշված քաղաքների հայերին տրված տնտեսական արտոնություններն ու հարկային ազատությունները): Կաթողիկոսը երկար ժամանակ խնդրանքն անպատասխան է թողնում: «…Քաղաքս (Նոր Նախիջևանը – Հ. Ա.) կայ ի ուղղումի և ի հարազատ որդիք սրբոյ Աթոռոյ և ամենքն փափագին ձերոյ օրհնութեանն և մեծաւ ջերմութեամբ զսուրբ աջ ձեր համբուրեն»[18],– գրում է Արղությանը: 1788 թ. մարտի 20-ին Ղզլարից Կարնեցուն գրում է. «…Ղզլարու մեծ և փոքր ժողովուրդքն ամէնքն փափագին հատկագոյն կոնտակի օրհնութեամբ սրբուի ձերոյ, վասնզի քանի ամ է զզանազան ձոխորդութիւն կրեցին երկիրն ևս զտունս ոչ կար որպէս յանցեալոյն հաւատով յուսն որ եթէ սրբուի ձէր զօրհնութիւն լուսաւորչին և շնօրհ սրբոյն աթոռոյդ առաքեսցէս աս սոսա ըստ նմին և զողորմումին աստուծոյ գտնելոցին: Ուրէմն սրբուի ձէր ո՞չ պարտիք զանց առնել զջերմէռանդ խնդրվածս սոցին…»[19]:

Բացի այդ, քանիցս հայոց հայրապետին խնդրում է շնորհակալական ուղերձներ հղել ռուսաստանաբնակ մի շարք անձանց՝ նշելով բոլորի անունները (այդ թվում՝ ռուսական արքունիքում մեծ հեղինակություն վայելող, հայ ազգային գործիչ Հով-

---

[17] *Նույն տեղում, թ. 152:*

[18] *Նույն տեղում, թ. 110:*

[19] *Նույն տեղում, թ. 156:*

հաննես Լազարյանին), որոնք իրենց աջակցությունն էին ցուցաբերել Արղությանին՝ Հայաստանի պետականության վերականգման նպատակով ռուս գործիչների հետ հանդիպումների ժամանակ, ինչպես նաև՝ ռուսահայ թեմում առկա խնդիրների լուծման ճանապարհին[20]: Դեռևս 1781 թ. փետրվարի 23-ին Նոր Նախիջևանից գրած նամակում Արղությանը թվարկում էր Պետերբուրգի, Մոսկվայի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի և Նոր Նախիջևանի ավելի քան յոթանասուն ազդեցիկ հայերի անուններ. «…որոց հարկաւոր է գրել առ իւրաքանչիւրսն գիր սրբութեան…»[21]: Սակայն կաթողիկոսն օրհնության գիր է հղում միայն ոմն Վարդան վարդապետի: Վիրավորված արքեպիսկոպոսը դատապարտում է կաթողիկոսին, որ վերջինս զլացավ կոնդակ հղել այնպիսի կարևոր անձանց, ինչպիսիք էին Հովհ. Լազարյանը և մյուս երևելիների. «…որ տուրք են տուեալ սրբոյ գահիդ…ուրեմն Վարդանայ խնդիրքն առաւել յարգոյք են առաջի ձէր, քան թէ մերս նուաստիւնքն»[22]:

1788 թ. հուլիսի 30-ին արքեպիսկոպոսը հերթական նամակն է հղում կաթողիկոսին, շարադրում նվիրատուների անուններ, ափսոսանք հայտնում իր հանդեպ կաթողիկոսի ոչ պատշաճ վերաբերմունքի համար. «…մեր գրեցեալք ոչինչ ազդելոց չեն, թէրևս վասն անձնական ինչ ախտի գրեմ կամ փառաց, ապա ես շատ ափսոսամ, որ սրբուի ձերոյ զգուսպ և զմաքուր խղճմտանս իմ մինչև ցարդ ոչ ճանաչեաց, եթէ ճանաչէիք, ոչ այդպէս վարուէիք ընդ իս»[23]: Անթվական նամակներից մեկում մեղադրում է, որ Կարնեցին զլացավ շնորհավորել Հովհ. Լազարյանի նոր զինվորական կոչումը և շնորհակալություն հայտնել նրան Աստրախան գնալու և այնտեղի հայերին տեսակցելու համար. «Վիճակս այս դեռևս ձեզ մեծագոյն վնաս ինչ ոչ է տուեալ, որ այդպէս չքէալ էք ի յօրհնութեանն և թէ խնդրէմք, լսէք և զանց առնէք լաւ բան չէ վասն սրբոյ գահիդ, այլ թէ նուէր և սէր ժողովրդինն պակասի ի ձէնջ և սովորութիւն կորուսեալ լինի»[24]:

Նա ոչ միայն անպատասխան է թողնում Արղությանի խնդրանքները, այլև սաստում է, երբ արքեպիսկոպոսը հերթական անգամ կաթողիկոսի ուշադրությունը դարձնում է Աստրախանի հայոց թեմի և ռուսաբնակ մյուս հայկական տարածքների վրա. «...այո, հարկավոր է որ աշխատես, բայց պետք չէ անփոյթ առնել այս կողմերը՝ ինչպիսին Վրաստանն է, որ խեղճութեան մեջ է, և Օսմանցւոց երկիրը, որ վրդովմունքի մեջ է «[25],– գրում է կաթողիկոսը:

---

[20] *Տե՛ս նույն տեղում:*

[21] *Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 26, թթ. 8–9:*

[22] *Նույն տեղում, ձեռ. 2699, թ. 152–153:*

[23] *Նույն տեղում, թ. 167:*

[24] *Նույն տեղում, թ. 173:*

[25] *Գ. Ա ղ ա ն ե ա ն ց. Դիւան հայոց պատմութեան, գ. Թ, Թիֆլիս, 1911, էջ 112:*

Արղությանի վրդովմունքը գագաթնակետին է հասնում, երբ իր բացակայության ընթացքում կաթողիկոսը Սուրբ Աթոռի կողմից Աստրախան նվիրակ (Սուրբ Աթոռի ներկայացուցիչ) է ուղարկում վերը հիշատակած Վարդան վարդապետին, որին հանձնարարված էր Մայր Աթոռի թեմական տուրքը հավաքել և ժամանակին ուղարկել Էջմիածին: Արղությանը կաթողիկոսին գրում է. «…միթէ նուիրակն կարէ առնէլ ինչ, առանց իմ, և եթէ ծանրութիւն ես կրեմ, վասն էր՞ տամ նիւթ խառնվութիւն ժողովուրդեան և բեկումն անուան իմոյ… իսկ եթէ դուք կամիք զմեզ ի միաբանութենէ սրբոյ Աթոռոյդ հանել, կարծեմ ոչ բարւոք առնէք և առնեալն է անկարելի…»[26]:

Կաթողիկոսի նման վերաբերմունքի դրդապատճառն այն էր, որ, լինելով Էջմիածնին ենթակա թեմական կառույց, Աստրախանի ռուսահայ թեմը՝ հանձինս իր առաջնորդ Հ. Արղությանի, շատ հարցերում հանդես էր բերում լիիրավ ինքնուրույնություն: Ահա ինչու Ղ. Կարնեցին սկսում է միջամտել թեմի ներքին հոգևոր, այդ թվում՝ եկեղեցական տուրքի հարցերին: 1788 թ. մայիսի 2-ին գրված Արղությանի նամակից զգացվում է, որ կաթողիկոսը բավական կոշտ պատասխան է հղել արքեպիսկոպոսին, անգամ նշելով, որ կարող են եկեղեցական հարկը չվճարել: Վիրավորված արքեպիսկոպոսը գրում է. «…մէզ անպատշաճ նման բաներ արժանի չէ: …մինչև այսօր Սուրբ Աթոռին համար նախատեսվածը աչքի լոյսի պէս եմ պահել…»[27]:

Ռուսահայերի հոգևոր առաջնորդը մեղադրում է կաթողիկոսին, որ վերջինս խախտել է թեմական կյանքին չխառնվելու իր խոստումը, բայց. «…այժմ որպէս նուիրակ կարգեցիր և ինչ՞ օրինաք…»[28], և հրաժարվում է ընդունել ոչ միայն Վարդան վարդապետին, այլև որևէ այլ նվիրակի. «…անգամ եթէ Վարդանը չէ…ես ոչ հաճիմ և ոչ ընդունեմ ևս յաւուրս իմ ոչ լինիմ պատճառ այդպիսի գայթակղութեան և վնասուց, երբ ես ելանէմ աստի կամ մեռանիմ, կամիս տասն բաժանիս զվիճակս…, քանի ես յերկրումս եմ, նուիրակ եմ և առաջնորդ սրբոյ գահիդ…»[29]:

Ղուկաս Կարնեցին անարձագանք է թողնում անգամ արքեպիսկոպոսի մեռոնի խնդրանքը: «Երկու տարի է սրբալոյս միւռօն խնդրեմ, ոչ առաքես և ոչ պատասխան ինչ առնիս թէ ինչ պատճառ է յարգելուս»[30],– գրում է ռուսահայերի առաջնորդը: 1788 թ. հուլիսի 30-ի նամակից տեղեկանում ենք, որ կաթողիկոսը մեռոն չուղարկելը պատճառաբանել է այն իրողությամբ, որ արքեպիսկոպոսը ոմն աշխար-

---

[26] *ՄՄ, ձեռ. 2699, թ. 166:*

[27] *Նույն տեղում, թ. 157:*

[28] *Նույն տեղում, թ. 158:*

[29] *Նույն տեղում:*

[30] *Նույն տեղում, թ. 152:*

հիկ անձի միջոցով է այն խնդրել: Կաթողիկոսի պարզաբանմանը հետևում է Արղությանի հակադարձ պատասխանը[31]:

Արքեպիսկոպոսը շարունակում է անպատասխան նամակներ հղել կաթողիկոսին: 1788 թ. օգոստոսին գրեթե միևնույն բովանդակությամբ երկու նամակ է ուղարկում՝ տեղեկություններ հաղորդելով ռուս-թուրքական երկրորդ պատերազմում (1787–1791 թթ.) ռուսների հաղթանակների մասին[32]: Իսկ 1792–1795 թթ. ընթացքում նրա և կաթողիկոսի միջև նամակագրությունն ընդհատվում է[33]:

1796 թ. Պավել I գահակալությամբ Արղությանը Հովհ. Լազարյանի շնորհիվ արժանացավ նորանշանակ կայսրի բարեհաճությանը: Անգամ Ղուկաս կաթողիկոսը կայսեր գահակալության առիթով 1797 թ. իր շնորհավորական ուղերձն ուղարկեց Հովսեփ Արղությանի միջոցով[34]: Կաթողիկոսը Հովսեփին տեղեկացնում է, որ կայսրին երկու խնդրանք է հղել. նախ որ հայ ժողովրդի նկատմամբ խնամակալական վերաբերմունք դրսևորի, երկրորդ՝ ինչպես Եկատերինա կայսրուհին էր շնորհել Սիմեոն կաթողիկոսին «զհրովարտակ ողորմութեան», նույնպես և Պավելը իրեն շնորհի[35]: Այս մասին տեղեկանում ենք նաև կաթողիկոսի՝ Հովհ. Լազարյանին գրած նամակից, որում նշում է, որ Արղությանի առաջարկով «…դիմելոց է ի կայսերականդ դուռն, և մեք պատկան գիտելով ահա գրեցաք զթուղթ շնորհաւորութեան և աղերսանաց առ նորին կայսերական գերամերձ բարձրագահութիւնն…»[36]:

Արղությանի և հայ հասարակական-քաղաքական մյուս գործիչների ջանքերի շնորհիվ Պավել կայսրը 1798 թ. փետրվարի 26-ի հրովարտակով իր բարեհաճությունն ու շնորհակալությունն էր հայտնում ամբողջ հայ ժողովրդին, նշելով, որ հետևելով Պետրոս Մեծի և Եկատերինայի օրինակին, իր հովանավորությունը պետք է տարածի հայ ազգի վրա[37]: Արքեպիսկոպոսը շտապում է ուրախալի լուրը հայտնել Էջմիածին՝ կաթողիկոսին: Այդ մասին տեղեկանում ենք կաթողիկոսի՝ 1798 թ. հոկտեմբերի 18-ին Էջմիածնից գրած նամակից, որում Ղուկասն, ի պատասխան Հովսեփի՝ մայիսի 20-ին Պետերբուրգից գրած նամակի, իր ուրախությունն է հայտնում, որ կայսրն ընդունել է իր գրությունը, հրովարտակ շնորհել և պարգևներ տվել: Կաթողիկոսը միաժամանակ տեղեկացնում է, որ Արղությանի

---

[31] Տե՛ս նույն տեղում, թ. 171:

[32] Տե՛ս նույն տեղում, թ. 173:

[33] Մատենադարանի թիվ 2951 ձեռագիրն իր մեջ ժամանակագրորեն ամփոփում է Արղությանի 1792–1795 թթ. ընդգրկող ավելի քան 300-ի հասնող նամակ, որոնցում կաթողիկոսին հասցեագրված ոչ մի նամակի չենք հանդիպում:

[34] Լ. Է. օ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թիֆլիս, 1902, էջ 167:

[35] Գ. Ա ղ ա ն է ա ն ց. նշվ. աշխ, էջ 223:

[36] Նույն տեղում, էջ 228:

[37] Собрание актовъ, относящихся к обозрению истории армянского народа, т. I. М., 1833, с. 194–196.

խնդրանքով պատրաստվում է նամակներ ուղարկել Աստրախանի նահանգապետին, ռուս արքեպիսկոպոսին, Հյուսիսային Կովկասի զորքերի հրամանատար, գեներալ Ի. Գուդովիչին՝ իր գոհունակությունն արտահայտելու ռուսահայերի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի համար: Տեղեկացնում է, որ կոնդակներ է հղել Նոր Նախիջևանի, Ղզլարի և Դերբենդի հայ բնակիչներին[38]:

Հաջորդ՝ 1799 թ. փետրվարի 12-ին, կաթողիկոսի՝ Արղությանին գրած նամակից տեղեկանում ենք, որ արքեպիսկոպոսի խնդրանքով Ղուկաս Կարնեցին կոնդակ է գրել նաև Պետերբուրգի և Մոսկվայի հայ և ռուս բնակչությանը՝ նկարագրելով հայ ժողովրդի վիճակը և օգնություն խնդրել: Պարզվում է, որ Հովսեփը կաթողիկոսից պահանջել է ռուս հասարակությանն ուղղված կոնդակում ինչ-ինչ պատվիրաններ գրել, ինչը, սակայն կաթողիկոսը հարմար չի համարել՝ պատճառաբանելով, որ ոմանց համար կարող էր դժվարընկալելի լինել: Ինչ վերաբերում է Ղրիմի և Գրիգորիոպոլի հայերին կոնդակ ուղարկելու Արղությանի խնդրանքին, կաթողիկոսը պարզաբանում է, որ ներկայումս նրանց վիճակի մասին տեղեկություն չունի, երբ Արղությանը գրի, թե ինչ կացության մեջ են այդտեղի բնակիչները՝ «...այդ ժամանակ կգրեմ՝ ըստ պատշաճի, կամ ուրախութեան, կամ մխիթարութեան»[39]:

Այնուհետև, կաթողիկոսի 1799 թ. սեպտեմբերի 17-ի նամակից տեղեկանում ենք, որ Հովսեփը մայիս-հուլիս ամիսների ընթացքում չորս անպատասխան նամակ է հղել Էջմիածին՝ ուղարկելով նաև կայսերական հրովարտակի օրինակը[40]:

1799 հոկտեմբերի 15-ին Ղուկաս Կարնեցին շնորհակալական գրություններ է հղում Պավել կայսրին և Հովհ. Լազարյանին՝ իր երախտագիտությունը հայտնելով առաջինին՝ հրովարտակի, պարգևների և ռուսահայերի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի, երկրորդին՝ իր բարեգթության և հայրենասիրության համար[41]:

Այսպիսով, երկու նշանավոր հոգևոր գործիչների նամակագրության մեջ արտացոլված են նախնառաջ Հայաստանն օտար տիրապետությունից ազատագրելու վերաբերյալ նրանց ցանկությունները: Արղությանը, փորձելով ռուսների անդրկովկասյան արշավանքներին իր նախընտրած ուղղությունը տալ, ինչպես նաև մտահոգված իր թեմի կյանքի բարօրությամբ, ձգտում էր այդ նպատակների համար օգտագործել կաթողիկոսի՝ որպես հայ ժողովրդի հոգևոր առաջնորդի հեղինակությունը: Նամակներում արտահայտվում են արքեպիսկոպոսի վախն ու տագնապները հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող դարաշրջանի իրադարձությունների հարցում:

---

[38] Գ. Ա ղ ա ն ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 249–256:

[39] Նույն տեղում, էջ 258:

[40] Նույն տեղում, էջ 277–278:

[41] Նույն տեղում, էջ 283–289:

Մյուս կողմից, լինելով թեմական առաջնորդ և ենթակա Սուրբ Աթոռի գերագահությանը, Արղությանը դրսևորում էր ինքնուրույն գործելակերպ, ինչը սպառնում էր ռուսահայ թեմին վերածվելու Մայր Աթոռի նկատմամբ գաղափարական հակառակորդի ու հակաթոռ թեմի: Կաթողիկոսը փորձում էր նվիրակների միջոցով մեծացնել էջմիածնի վերահսկողությունը թեմի նկատմամբ: Այս ամենը հանգեցրեց հոգևոր գործիչների միջև որոշակի տարաձայնության: Չնայած այդ ամենին, Մայր Աթոռը չկորցրեց իր իրավասությունը Ռուսաստանի հայկական թեմի նկատմամբ:

ПЕРЕПИСКА АРХИЕПИСКОПА ИОСИФА АРГУТЯНА С КАТОЛИКОСОМ ВСЕХ АРМЯН ГУКАСОМ КАРНЕЦИ
(Конец XVIII В.)

АСМИК АМИРДЖАНЯН

Р е з ю м е

Видный государственный и религиозный деятель архиепископ Иосиф Аргутян, будучи сторонником русской ориентации, всячески поднимал в кругах армянских национальных деятелей вопрос освобождения Армении от чужеземного ига с помощью русских войск. Он также вел переписку с Католикосом Всех Армян Гукасом Карнеци по этому вопросу. В этих письмах выражены различия в политических взглядах двух деятелей, их переживания и отношение к политическим и религиозным проблемам армянского народа.

THE LETTERS OF ARCHBISHOP HOVSEP ARGHUTYAN TO THE CATHOLICOS OF ALL ARMENIANS GHUKAS KARNETSI
(The end of the 18th century)

HASMIK AMIRJANYAN

S u m m a r y

The prominent political and religious figure, the Russian-oriented Archbishop Hovsep Arghutyan, raised the question of the national liberation struggle for Armenia from foreign yoke with the help of Russian troops in circles of Armenian national authorities. He also discussed the question with the Catholicos of All Armenians Ghukas Karnetsi. These letters depict the differences of political views of both figures, their feelings and attitude to the political and religious problems of Armenian people.